

Ա Ր Ձ Ա Ն Ա Գ Ր ՈՒ Թ Յ ՈՒ Ն № 2

ԵՊՀ Ֆարմացիայի ինստիտուտի 2021-2022 ուս. տարվա
գիտական խորհրդի նիստի

ք.Երևան

25 հոկտեմբերի 2021թ.

Ներկա էին՝ գիտխորհրդի 24 անդամներից 18-ը (ներկայաթերթիկը կցված է):

Նախագահ՝ ք.գ.թ., դոցենտ. Ս. Վարդապետյան

Գիտական քարտուղար՝ ք.գ.թ. Ա. Դադայան

ՕՐԱԿԱՐԳՈՒՄ՝

1. Ֆարմացիայի ինստիտուտի ասպիրանտների և հայցորդների տարեկան ատեստավորման հարցը: **Զեկուցող՝ Ս. Վարդապետյան**
2. ԵՊՀ Ֆարմացիայի ինստիտուտից լավագույն առաջադիմությամբ ուսանողների անվանական կրթաթոշակների տրամադրման մրցույթին մասնակիցների առաջադրման հարցը: **Զեկուցող՝ Ս. Վարդապետյան**
3. Ընթացիկ հարցեր:

ՔՆՆԱՐԿԵՑԻՆ ԵՎ ՈՐՈՇԵՑԻՆ՝

1. Ֆարմացիայի ինստիտուտի ասպիրանտների և հայցորդների տարեկան ատեստավորման հարցը:

Լսեցին՝

- 1.1. *Ֆարմացիայի ինստիտուտի Ֆարմատեխնոլոգիայի և ֆարմացիայի էկոնոմիկայի ու կառավարման ամբիոնի երկրորդ տարվա առկա անվճար ուսուցմամբ ասպիրանտ Անուշ Արմենի Ոսկանյանի ատեստավորման հարցը:*

Ելույթ ունեցավ Ֆարմացիայի ինստիտուտի ուսումնական հարցերի գծով փոխսնօրեն Ս. Վարդապետյանը, ով հաղորդեց, որ հարցը քննարկվել է Ֆարմատեխնոլոգիայի և ՖԷԿ-ի ամբիոնում և, հաշվի առնելով ասպիրանտի

կողմից կատարված աշխատանքները, ամբիոնը երաշխավորել է ատեստավորման:

Ս. Վարդապետյանը տեղեկացրեց, որ ուսուցման առաջին տարում ասպիրանտը հանձնել է կրթական բաղադրիչի «Պարտադիր դասընթացներ և քննություններ» և «Ընտրովի դասընթացներ» բաժիններով նախատեսված առարկաների քննություններն ու ստուգարքները: Ներկայումս ասպիրանտն իրականացնում է ատենախոսության շրջանակներում նախատեսված աշխատանքները. ՀՀ դեղերի մասին օրենքի ուսումնասիրում և օրենսդրական պահանջների դիտարկում, դեղատնային գործի կազմակերպման ուսումնասիրում: Անուշ Ոսկանյանը, ատենախոսական աշխատանքի ղեկավարի հետ միասին մշակել է հարցաշար՝ ՀՀ դեղատներում առկա խնդիրները վեր հանելու և դրանց հիման վրա կանոնակարգող ընթացակարգեր ու հրահանգներ մշակելու համար:

Որոշեցին՝ (միաձայն) հաշվի առնելով Ֆարմտեխնոլոգիայի և ՖԷԿ-ի ամբիոնի կարծիքը՝ ատեստավորել ասպիրանտ Անուշ Արմենի Ոսկանյանին:

1.2. *Ֆարմացիայի ինստիտուտի Ֆարմտեխնոլոգիայի և ֆարմացիայի էկոնոմիկայի ու կառավարման ամբիոնի երկրորդ տարվա հայցորդ Հովհաննես Վաչագանի Ղազարյանի ատեստավորման հարցը:*

Ֆարմացիայի ինստիտուտի գիտական խորհրդի նախագահ ք.գ.թ., դոցենտ Ս. Վարդապետյանը ներկաներին հաղորդեց, որ հարցը քննարկվել է Ֆարմտեխնոլոգիայի և ՖԷԿ-ի ամբիոնում և, հաշվի առնելով հայցորդի կողմից կատարված աշխատանքները, ամբիոնը երաշխավորել է ատեստավորման: Ս. Վարդապետյանը նշեց, որ ուսուցման երկրորդ տարում հայցորդ Հովհաննես Ղազարյանը հանձնել է կրթական բաղադրիչի «Պարտադիր դասընթացներ և քննություններ» բաժնից Տեղեկատվական և կրթական նոր տեխնոլոգիաներ առարկայի ստուգարքը, հաշվետու տարում կատարած գիտահետազոտական աշխատանքների հիման վրա տպագրության է ներկայացրել մեկ հոդված:

Որոշեցին՝ (միաձայն) հաշվի առնելով Ֆարմտեխնոլոգիայի և ՖԷԿ-ի ամբիոնի կարծիքը՝ ատեստավորել հայցորդ Հովհաննես Վաչագանի Ղազարյանին:

1.3. Ֆարմացիայի ինստիտուտի Ֆարմբիմիայի և ֆարմակագնոգիայի ամբիոնի չորրորդ տարվա հայցորդ Նաիրա Կամոյի Շաբոյանի ատեստավորման հարցը:

Ֆարմացիայի ինստիտուտի գիտական խորհրդի նախագահ ք.գ.թ., դոցենտ Ս. Վարդապետյանը հաղորդեց, որ հարցը քննարկվել է Ֆարմբիմիայի և ֆարմակագնոզիայի ամբիոնում և, հաշվի առնելով հայցորդի կողմից կատարված ծավալուն աշխատանքները, ամբիոնը երաշխավորել է ատեստավորման: Ս. Վարդապետյանը նշեց, որ հաշվետու ժամանակաշրջանում հայցորդ Նաիրա Շաբոյանը հանձնել է մասնագիտական որակավորման քննությունը, կրթական բաղադրիչի մասնագիտական օտար լեզու, մանկավարժություն, գիտության փիլիսոփայություն, գիտական հետազոտությունների մեթոդաբանություն և ինֆորմատիկա առարկաների ստուգարքները: Հաշվետու տարում կատարած գիտահետազոտական աշխատանքների հիման վրա տպագրվել է 2 հոդված և 1 միջազգային գիտաժողովի թեզիս:

Որոշեցին՝ (միաձայն) հաշվի առնելով Ֆարմբիմիայի և ֆարմակագնոզիայի ամբիոնի կարծիքը՝ ատեստավորել հայցորդ Նաիրա Կամոյի Շաբոյանին:

2. **ԵՊՀ Ֆարմացիայի ինստիտուտից լավագույն առաջադիմությամբ ուսանողների անվանական կրթաթոշակների տրամադրման մրցույթին մասնակիցների առաջադրման հարցը:**

Ելույթ ունեցավ՝ Գիտական խորհրդի նախագահ, ք.գ.թ., դոցենտ Ս. Վարդապետյանը, ով տեղեկացրեց, որ նշված մրցույթին մասնակցելու համար հայտ է ներկայացրել մագիստրատուրայի ուսանողուհի Էմմա Արմենի Մարկոսյանը: Ելույթ ունեցան նաև գիտխորհրդի անդամներ կ.գ.թ. Ա. Հովհաննիսյանը, ք.գ.թ. Հ. Սիմոնյանը և ք.գ.թ. Ա. Մկրտչյանը, ովքեր նշեցին, որ Էմմա Մարկոսյանը ուսումնառության ընթացքում ցուցաբերել է գերազանց առաջադիմություն, մինչև 2020/2021 ուսումնական տարին հանդիսացել է Ֆարմացիայի ինստիտուտի ուսանողական խորհրդի նախագահը: Ֆարմացիայի ինստիտուտի գիտական քարտուղար Ա. Դադայանը ներկաներին տեղեկացրեց նաև, որ Էմմա Մարկոսյանը 2021 - 2022 ուս. տարում գիտական զեկուցմամբ հանդես է եկել ԵՊՀ ՈւԳԸ 2021թ. ՀՀ անկախության 30-ամյակին նվիրված գիտական նստաշրջանին, որի շրջանակներում տպագրության է երաշխավորվել «Դեղագործական թափոնների կառավարում» վերնագրով հոդվածը:

Որոշեցին՝ Ֆարմացիայի ինստիտուտի գիտական խորհուրդը միաձայն որոշեց առաջադրել Էմմա Արմենի Մարկոսյանի թեկնածությունը՝ «ՀՀ բարձրագույն մասնագիտական կրթական ծրագրեր իրականացնող ուսումնական հաստատությունների լավագույն առաջադիմությամբ ուսանողների անվանական կրթաթոշակների տրամադրման» մրցույթին մասնակցելու համար:

3. Ընթացիկ հարցեր:

Նիստում ընթացիկ հարցեր չեն քննարկվել:

Գիտական խորհրդի նախագահ,

ք.գ.թ., դրցենս՝

Ս. Վարդապետյան

Գիտական խորհրդի քարտուղար՝ ք.գ.թ.

Ա. Դադայան